



ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
Գրացրիք & Ինֆորմացիոն Եվոկիոն

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությանը`

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության
02.04.2015թ. թիվ 47-Լ որոշմամբ

Ուժի մեջ է` 03.04.2015թ.-ից

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ**

2015թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2.	ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	4
3.	ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ և ԿԱՄ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ	5
4.	ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ.....	5
5.	ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	8
6.	ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ.....	9
7.	ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	12
8.	ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	12
9.	ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	12
10.	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ.....	13
11.	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	13

	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ընթացակարգ		
	Տարբերակ՝ 3.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.04.2015թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն ընթացակարգը սահմանում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից Հաճախորդի արժեթղթերի (բաժնետոմսերի և պարտատոմսերի) թողարկման և/ կամ տեղաբաշխման կազմակերպման հիմնական փուլերը, Բանկի կողմից առաջարկվող ծառայությունները, դրանց տրամադրման կարգն ու հիմնական պայմանները:
- 1.2. Արժեթղթերի թողարկման և/կամ տեղաբաշխման կազմակերպման ընթացքում Բանկը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, սույն ընթացակարգով և Բանկի ներքին այլ ակտերով:
- 1.3. Սույն ընթացակարգը չի կարգավորում սահմանափակ շրջանառության իրավունքով արժեթղթերի և ոչ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի թողարկման կազմակերպման գործընթացը, բացառությամբ՝ ոչ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի այն թողարկումների կազմակերպմանը, որոնց պայմաններով նախատեսված է, որ արժեթղթերը պետք է շրջանառվեն կարգավորվող շուկայում (շուկաներում):
- 1.4. Սույն ընթացակարգում հիմնական հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստով.
 - 1.4.1. **Հաճախորդ**՝ իրավաբանական անձ, որը ցանկանում է արժեթղթեր թողարկել,
 - 1.4.2. **Ներդրումային ծրագիր**՝ Հաճախորդի կողմից արժեթղթերի թողարկման արդյունքում հավաքագրված դրամական միջոցների օգտագործումը և արժեթղթերից բխող պարտավորությունները կատարելու կապակցությամբ ստացվող դրամական հոսքերը հիմնավորող փաստաթուղթ,
 - 1.4.3. **Տեղաբաշխողների սինդիկատ**՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց և այլ անձանց ժամանակավոր միավորում՝ արժեթղթերի տեղաբաշխումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով,
 - 1.4.4. **Պատասխանատու ստորաբաժանում**՝ Բանկի ներդրումային գործառնությունների համար պատասխանատու ստորաբաժանում, որը կազմակերպում և/կամ իրականացնում է Հաճախորդների արժեթղթերի թողարկման և/կամ տեղաբաշխման կազմակերպման գործառնությունը,
 - 1.4.5. **Օժանդակող ստորաբաժանումներ**՝ Բանկի Հաճախորդների սպասարկման համար պատասխանատու ստորաբաժանում և Բանկի իրավաբանական սպասարկման համար պատասխանատու ստորաբաժանում, որոնք Պատասխանատու ստորաբաժանմանն օժանդակում են արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման գործընթացի կազմակերպման ընթացքում՝ համապատասխանաբար արժեթղթերի տեղաբաշխման, պարտադիր գնանշումների կազմակերպման, հաշվարկային ծառայությունների մատուցման, ինչպես նաև արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման գործընթացում առաջացող իրավաբանական հարցերի առնչությամբ:

2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. Բանկը արժեթղթերի թողարկման և/կամ տեղաբաշխման կազմակերպման շրջանակներում Հաճախորդին կարող է առաջարկել ծառայությունների հետևյալ համալիրը.
 - 2.1.1. Արժեթղթերի շուկայի վերլուծություն (արժեթղթերով կատարված գործարքների վերլուծություն, շուկայի կոնյունկտուրայի ուսումնասիրություն և կանխատեսում),
 - 2.1.2. Թողարկողի վարկունակության և ներդրումային ծրագրի (բիզնես-պլանի) գնահատում,
 - 2.1.3. Բացահայտման ենթակա տեղեկությունների արժանահավատության ստուգում (due diligence),
 - 2.1.4. Արժեթղթերի հայեցակարգի մշակում,
 - 2.1.5. Արժեթղթերի թողարկմանն առնչվող օրենսդրական հարցերի, այդ թվում՝ խոշոր գործարքներին առնչվող հարցերի վերաբերյալ խորհրդատվություն,
 - 2.1.6. Արժեթղթերի ազդագրի պատրաստում, ինչպես նաև ազդագրի պետական գրանցման գործընթացում պատշաճ ներկայացուցչության ապահովում,
 - 2.1.7. Պոտենցիալ ներդրողների բացահայտման աշխատանքների իրականացում (անհատական հանդիպումների, road show-ների կազմակերպման միջոցով),
 - 2.1.8. Արժեթղթերի տեղաբաշխմանն ուղղված մարքեթինգային միջոցառումների իրականացում (գովազդ, բուկլետների պատրաստում և այլն),
 - 2.1.9. Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպում,
 - 2.1.10. Հաճախորդների՝ արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման երաշխիքների տրամադրում,
 - 2.1.11. Երկրորդային շուկայում արժեթղթերի իրացվելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ,
 - 2.1.12. Տեղեկատվության բացահայտման կազմակերպում,
 - 2.1.13. Արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման առնչությամբ հաշվարկային ծառայություններ,
 - 2.1.14. Ռեեստրի վարում,
 - 2.1.15. Արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման հետ կապված այլ ծառայություններ:
- 2.2. Սույն ընթացակարգի 2.1 կետում նշված ծառայությունները Բանկը մատուցում է Հաճախորդի հետ կնքելով համապատասխան պայմանագիր (պայմանագրեր): Ծառայությունները Հաճախորդին կարող են առաջարկվել միասնական կամ առանձին փաթեթներով՝ համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու միջոցով:
- 2.3. Բանկը Հաճախորդի հետ արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքում, եթե.
 - 2.3.1. Հաճախորդի ինքնությունը բացահայտված է ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ակտերի համաձայն,
 - 2.3.2. Հաճախորդն ունի բարի գործարար համբավ,

	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ընթացակարգ		
	Տարբերակ՝ 3.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.04.2015թ.

- 2.3.3. Հաճախորդն ունի բավարար վճարունակություն՝ արժեթղթերի թողարկմամբ/տեղաբաշխմամբ ծագող պարտավորությունները պատշաճ կատարելու համար,
- 2.3.4. Հաճախորդի հետ համագործակցություն ձևավորելու ընթացքում Բանկը կարող է հաշվի առնել նաև այլ չափանիշներ:


3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ/ԿԱՍ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

- 3.1. Արժեթղթերի թողարկման գործընթացը կազմակերպվում է հետևյալ հիմնական փուլերով.
 - 3.1.1. Հաճախորդի հետ համագործակցության հաստատում,
 - 3.1.2. Արժեթղթերի թողարկման կազմակերպում,
 - 3.1.3. Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպում,
 - 3.1.4. Արժեթղթերի կարգավորվող շուկայում թույլտվություն ստանալու (ցուցակման) կազմակերպում, երկրորդային շուկայի իրացվելիության ապահովման աշխատանքներ,
 - 3.1.5. Արժեթղթերի սպասարկման և մարմանն ուղղված ծառայություններ:

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

- 4.1. Հաճախորդի և Բանկի միջև արժեթղթերի թողարկմանը և տեղաբաշխմանն ուղղված ծառայությունների տրամադրման կապակցությամբ համագործակցություն կարող է հաստատվել բանակցությունների վարման և Թողարկողի կողմից համապատասխան Հայտի /Հավելված 1/ ներկայացման կամ Հաճախորդի կողմից հայտարարված մրցույթներին Բանկի մասնակցելու և հաղթող ճանաչվելու միջոցով:
- 4.2. Հայտում Թողարկողը կատարում է համապատասխան նշումներ Բանկի կողմից մատուցվող կոնկրետ ծառայություններից օգտվելու մասին:
- 4.3. Հայտին կից Հաճախորդը Բանկի պահանջով նրան է փոխանցում հետևյալ փաստաթղթերը.
 - 4.3.1. Հաճախորդի կանոնադրության և պետական գրանցման վկայականների պատճենները,
 - 4.3.2. Հաճախորդի հարկ վճարողի հաշվառման համարը,
 - 4.3.3. Հաճախորդի գործունեության համար անհրաժեշտ հատուկ թույլտվությունների (լիցենզիաների) պատճենները (առկայության դեպքում),
 - 4.3.4. Բանկի հետ վարվող բանակցություններում (աշխատանքային հանդիպումներում) հանդես գալու, համապատասխան պայմանագրեր և այլ փաստաթղթեր ստորագրելու իրավունք ունեցող անձի/անձանց լիազորությունները հաստատող փաստաթղթեր (նշանակման հրամանի կամ որոշման պատճեն),
 - 4.3.5. Ներդրումային ծրագրի նկարագիրը (բիզնես պլանը),
 - 4.3.6. Թողարկվող արժեթղթերի նախնական պայմանները (առկայության դեպքում),

- 4.3.7. Նախկինում թողարկված արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման էական պայմանների վերաբերյալ տեղեկություններ:
- 4.3.8. Հաճախորդի ընթացիկ և նախորդող երեք տարիների ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված անկախ աուդիտորի կողմից, ինչպես նաև՝
- հաշվեկշռային հետևյալ հոդվածների մեկնաբանում՝ հիմնական միջոցներ, արտադրական պաշար, պատրաստի արտադրանք, ապրանքներ, հաշվարկներ դեբիտորների հետ, հաշվարկներ կրեդիտորների հետ,
 - հարկերից ազատվելու և արտոնությունների մասին տեղեկանք (առկայության դեպքում):
- 4.3.9. Փաստաթղթեր, որոնք բնութագրում են Հաճախորդի նախկինում վարած գործունեությունը (գործունեության համառոտ բնութագիրը, հիմնական ուղղությունները, նրանց տեսակարար կշիռը, սեփական սպառման ցանցի և արտադրական բազայի առկայությունը, և Բանկի կողմից այլ պահանջվող փաստաթղթեր) և ապագա կանխատեսումները:
- 4.3.10. Բանկի կողմից պահանջվող այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք բխում են արժեթղթերի թողարկման և/կամ տեղաբաշխման գործընթացն ավելի արժանահավատ գնահատելու համար:
- 4.4. Գույքի գրավով, երրորդ անձանց կողմից տրված երաշխիքներով կամ երաշխավորություններով ապահովված արժեթղթերի թողարկման դեպքում Հաճախորդը պետք է ներկայացնի գրավը նկարագրող կամ երաշխիքների կամ երաշխավորությունների ստացման վերաբերյալ պայմանավորվածություն վկայող փաստաթղթերը (առկայության դեպքում):
- 4.5. Պատասխանատու ստորաբաժանման կողմից Հաճախորդի ներկայացրած փաստաթղթերը ենթարկվում են վերլուծության և գնահատման՝ փաստաթղթերը ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետը Բանկի Գործադիր տնօրենի որոշմամբ կարող է երկարաձգվել:
- 4.6. Գնահատումն իրականացվում է հետևյալ ուղղություններով.
- 4.6.1. Հաճախորդի ֆինանսատնտեսական դրության վերլուծություն,
 - 4.6.2. Ներդրումային ծրագրի իրատեսականություն, այդ թվում՝ Հաճախորդի՝ պարտավորությունների սպասարկման և մարման հնարավորություններ,
 - 4.6.3. Բացահայտման ենթակա տեղեկատվության արժանահավատություն,
 - 4.6.4. Արժեթղթերի թողարկման և/կամ տեղաբաշխման գործընթացին առնչվող ռիսկեր,
 - 4.6.5. Պոտենցիալ ներդրողների շրջանակ:
- 4.7. Բացի սույն ընթացակարգի 4.6 կետում նշված ուղղություններից, գնահատման կարող են ենթարկվել նաև Հաճախորդի ներքին միջավայրը՝ կառավարման որակը, հաճախորդների սպասարկման մակարդակը, աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը, աշխատանքային պայմանները և այլն:
- 4.8. Հաճախորդի մրցակցային դիրքերը գնահատելու նպատակով կարող է իրականացվել նաև արտաքին միջավայրի վերլուծություն (տարածաշրջանային և ճյուղային գործոններ, շուկայական իրավիճակը, մրցակցության բնույթը և այլն), եթե Հաճախորդի կողմից չեն ներկայացվում համապատասխան փաստաթղթեր, որոնք ապահովում են Բանկի համար բավարար հիմքեր նման վերլուծություն չիրականացնելու համար:

	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ընթացակարգ		
	Տարբերակ՝ 3.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.04.2015թ.

- 4.9. Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են այցելություններ կազմակերպվել Հաճախորդի արտադրական տարածքներ՝ գործունեությանը ծանոթանալու նպատակով, ինչպես նաև հրավիրել փորձագետների՝ փորձագիտական կարծիք կամ եզրակացություն ստանալու նպատակով:
- 4.10. Գնահատման արդյունքներով, Թողարկման վերաբերյալ Բանկի դրական եզրակացության պարագայում, սահմանվում է արժեթղթերի հայեցակարգի (հետագայում նաև՝ Հայեցակարգ) նախագիծը: Դրական եզրակացության բացակայության պարագայում Թողարկողին ներկայացվում է համապատասխան Հայտը մերժելու վերաբերյալ գրավոր պարզաբանում:
- 4.11. Հայեցակարգը իր մեջ պարունակում է արժեթղթերի հիմնական բնութագիրը և թողարկման ու տեղաբաշխման պայմանների ամփոփ նկարագրությունը:
- 4.12. Հայեցակարգը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.
- 4.12.1. Թողարկման նպատակը. այստեղ նշվում է արժեթղթերի թողարկման միջոցով հավաքագրված ֆինանսական միջոցների օգտագործման նպատակը,
 - 4.12.2. Արժեթղթերի տեսակը և դասը,
 - 4.12.3. Արժեթղթերի թողարկման տրանշների քանակը (անհրաժեշտության դեպքում),
 - 4.12.4. Անվանական արժեքը և արժույթը,
 - 4.12.5. Արժեթղթերի քանակը,
 - 4.12.6. Թողարկման ծավալը (անվանական արժեք x քանակ),
 - 4.12.7. Արժեթղթերի ժամկետայնությունը (անհրաժեշտության դեպքում),
 - 4.12.8. Արժեթղթերի տեղաբաշխման կարգն ու պայմանները,
 - 4.12.9. Արժեթղթերի սեփականատերերի իրավունքները,
 - 4.12.10. Անհրաժեշտության դեպքում եկամտաբերությունը և տոկոսների վճարման կարգը, մասնավորապես՝
 - տարեկան տոկոսադրույքը,
 - տոկոսների վճարման հաճախականությունը, կարգն ու պայմանները,
 - արժեթղթերի մարման կարգն ու պայմանները (անհրաժեշտության դեպքում),
 - 4.12.11. Դրույթ արժեթղթերի ապահովվածության մասին,
 - 4.12.12. Այլ էական դրույթներ:
- 4.13. Հայեցակարգի վերաբերյալ Բանկի և Հաճախորդի միջև փոխհամաձայնություն ձեռք բերելուց հետո կազմվում է արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետև՝ Տեղաբաշխման կազմակերպման պայմանագիր): Պայմանագիրը պետք է ներառի՝
- 4.13.1. Ծառայությունների շրջանակը,
 - 4.13.2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
 - 4.13.3. Պայմանագրի գինը,
 - 4.13.4. ՀՀ օրենսդրությամբ, սույն ընթացակարգով, ինչպես նաև կողմերի հայեցողությամբ սահմանված այլ դրույթներ:
- 4.14. Արժեթղթերի հայեցակարգի և Տեղաբաշխման կազմակերպման պայմանագրի նախագծերը քննարկվում են Բանկի Ներդրումային կոմիտեի կողմից և հավանության արժանանալու դեպքում Թողարկողը կազմակերպում է վերջինիս կանոնադրությամբ սահմանված համապատասխան իրավասու մարմնի կողմից որոշման կայացումը և ներկայացումը Բանկ,

որից հետո կազմակերպվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Տեղաբաշխման պայմանագրի վավերացումը (կողմերի կողմից ստորագրումը): Երբ Բանկը պայմանագրի կնքմամբ ստանձնում է երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու պայմանագրային պարտավորություն, որի ծավալը գերազանցում է Բանկի ներդրումային ուղենիշներով սահմանված սահմանաչափեր, ապա նման պայմանագիր կնքելու վերաբերյալ հավանությունը տրվում է Բանկի Խորհրդի կողմից:

4.15. Տեղաբաշխման պայմանագրի կնքմամբ Պատասխանատու ստորաբաժանումում բացվում է արժեթղթերի թողարկման/տեղաբաշխման կազմակերպման գործ՝ կազմելով համապատասխան ռեզիստր, որում պահպանվում են գործին առնչվող բոլոր փաստաթղթերը:

5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 5.1. Արժեթղթերի թողարկման կազմակերպման նպատակով Բանկը մշակում է արժեթղթերի թողարկման մասին որոշման նախագիծը և ներկայացնում է Հաճախորդին՝ սահմանված կարգով այն հաստատելու նպատակով: Թողարկման մասին որոշման նախագիծը մշակվում է սույն ընթացակարգի 4.12. կետով սահմանված հայեցակարգում ներառված չափանիշների հիման վրա:
- 5.2. Թողարկման մասին որոշման ընդունումից հետո Բանկը նախապատրաստում է պետական լիազոր մարմին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (անհրաժեշտության դեպքում), մասնավորապես՝ մշակվում է արժեթղթերի ազդագիրը և հավաքագրվում դրան կից անհրաժեշտ փաստաթղթերը:
- 5.3. Ազդագրին կից փաստաթղթեր հավաքագրելու նպատակով Բանկի կողմից Հաճախորդից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, մասնավորապես՝
 - 5.3.1. Արժեթղթերի թողարկման մասին որոշման արձանագրության բնօրինակը կամ դրա պատճենը,
 - 5.3.2. Արժեթղթերի ռեեստրի վարման պայմանագիր,
 - 5.3.3. Արժեթղթերի թողարկմանն առնչվող առավելագույնը երեք տարի վաղեմության ժամկետ ունեցող որոշումները և պայմանագրերը կամ դրանց պատճենները (առկայության դեպքում),
 - 5.3.4. Արժեթղթերով նախատեսված պարտավորությունները կամ դրանց մի մասը երաշխավորող անձի կողմից տրված երաշխավորագրի բնօրինակը կամ դրա պատճենը (առկայության դեպքում),
 - 5.3.5. Այն պայմանագրերի բնօրինակները կամ դրանց պատճենները, որոնք Հաճախորդը կնքել է արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման նպատակով ներդրումային ծառայություններ մատուցող անձանց (այդ թվում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի) հետ,
 - 5.3.6. ՀՀ օրենսդրությամբ պահանջվող՝ արժեթղթերի ազդագրում ներառման ենթակա տեղեկությունները պարունակող բոլոր այլ փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները:

	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ընթացակարգ		
	Տարբերակ՝ 3.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.04.2015թ.

- 5.4. Բանկը կարող է Հաճախորդի անունից կամ նրա հետ համատեղ համագործակցել պետական լիազոր մարմնի հետ՝ արժեթղթերի ազդագրի գրանցման հետ կապված հարցերի առնչությամբ:
- 5.5. Արժեթղթերի ազդագրի գրանցման դեպքում Բանկը տվյալ ազդագիրը և այլ անհրաժեշտ տեղեկությունները բացահայտում է իր ինտերնետային էջում:
- 5.6. Ազդագիրը հրապարակելուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան ազդագրի հրապարակմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, Բանկը պարտավոր է հրապարակել հայտարարություն հրապարակային առաջարկի վերաբերյալ՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և բովանդակությամբ:
- 5.7. Սույն բաժնի աշխատանքներն կազմակերպվում են Պատասխանատու ստորաբաժնման կողմից՝ համագործակցելով Բանկի իրավաբանական բաժնի հետ:

6. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

- 6.1. Մինչև արժեթղթերի տեղաբաշխումը Բանկն իրականացնում է պոտենցիալ ներդրողների բացահայտման ուղղությամբ համապատասխան աշխատանքներ, եթե թողարկման պայմանագրով սահմանված է նման ծառայությունների մատուցումը: Այդ նպատակով Բանկը կարող է կազմակերպել հետևյալ միջոցառումները.
 - 6.1.1. Ներդրողների հետ գործնական հանդիպումների կազմակերպում,
 - 6.1.2. Լուսաբանման աշխատանքների իրականացում զանգվածային լրատվամիջոցներով,
 - 6.1.3. Պոտենցիալ ներդրողներին ազդագրերի տրամադրում,
 - 6.1.4. Ներդրողների ներգրավման նպատակով այլ մարքեթինգային աշխատանքների իրականացում,
 - 6.1.5. Հաճախորդի հետ փոխհամաձայնեցված այլ միջոցառումներ:
- 6.2. Տեղաբաշխման ձևի ընտրությունը կատարվում է տեղաբաշխման պայմանագրով սահմանված եղանակով/բորսայական կամ արտաբորսայական՝ հաշվի առնելով տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները և այլ իրավական ակտերը/: Տեղաբաշխման պայմանագրով պետք է սահմանվեն նաև տեղաբաշխման իրականացման պայմանների ու կարգի մասին դրույթներ:
- 6.3. Բանկը կարող է արժեթղթերի տեղաբաշխումն իրականացնել երաշխավորված և/կամ չերաշխավորված եղանակով՝ հաշվի առնելով սույն ընթացակարգի 4.14 կետի դրույթները:
- 6.4. Երաշխավորված տեղաբաշխում կազմակերպելու դեպքում Բանկը ստանձնում է սահմանված գնով արժեթղթերի թողարկման ամբողջ կամ դրա մի մասի կամ չտեղաբաշխված արժեթղթերի ամբողջ ծավալի կամ դրա մի մասի ձեռք բերման պարտավորություն՝ հետագա տեղաբաշխման պայմանով: Երաշխավորված տեղաբաշխում կարող է կազմակերպել հետևյալ եղանակներով.
 - 6.4.1. Թողարկված արժեթղթերի ծավալի մի մասի ձեռք բերում,
 - 6.4.2. Թողարկված արժեթղթերի ամբողջ ծավալի ձեռք բերում (փակ բաժանորդագրություն),

- 6.4.3. Թողարկման պայմանագրով նախատեսված ժամկետում չտեղաբաշխված արժեթղթերի ամբողջ ծավալի կամ մի մասի ձեռք բերում:
- 6.5. Բանկը երաշխավորված տեղաբաշխում կազմակերպում է Հաճախորդի կողմից հետևյալ չափանիշներին կամ չափանիշներից մեկին բավարարելու դեպքում.
- 6.5.1. Հաճախորդի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է Բանկի կողմից ընդունելի աուդիտորական ընկերության կողմից և նրա կողմից տրվել է դրական աուդիտի եզրակացություն,
- 6.5.2. Հաճախորդը ստացել է.
- ա) պարտատոմսերի թողարկման դեպքում՝ Թողարկողի պարտատոմսերն ընդգրկված են /կամ առկա են բավարար հիմքեր վստահ լինելու, որ տեղաբաշխումից հետո ընդգրկվելու են/ ՀՀ կենտրոնական բանկի հետ ռեպո գործառնությունների համար ընդունելի արժեթղթերի ցանկում: ,
 - բ) բաժնետոմսերի թողարկման դեպքում՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից «Ա», «Բ» կամ «Գ» վարկանիշ կամ միջազգային վարկանիշային գործակալությունների (Standart&Poors, Moody's, Fitch)՝ Բանկի կողմից ընդունելի վարկանիշներ կամ դրանց բացակայության դեպքում՝ բավարարել է Բանկի կողմից ներկայացված վարկունակության չափանիշները,
- 6.5.3. Բանկի կողմից նախատեսված այլ չափանիշների բավարարման դեպքում:
- 6.6. Չերաշխավորված եղանակով տեղաբաշխում իրականացնելու դեպքում Բանկը գործադրում է լավագույն ջանքեր արժեթղթերի տեղաբաշխման գործում՝ առանց չտեղաբաշխված արժեթղթերի ձեռքբերման որևէ պարտավորություն ստանձնելու:
- 6.7. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացին աջակցելու նպատակով Բանկը կարող է համագործակցել ներդրումային գործունեություն ծավալող այլ անձանց հետ՝ ստեղծելով տեղաբաշխողների սինդիկատ:
- 6.8. Տեղաբաշխողների սինդիկատի կազմավորման կամ դրա մասնակցության համար Բանկը սինդիկատի անդամների հետ կնքում է երկկողմանի կամ բազմակողմանի պայմանագրեր, որոնք սահմանում են՝
- 6.8.1. Արժեթղթերի համապատասխան մասնաբաժինները, որոնք սինդիկատի անդամները պարտավորվում են տեղաբաշխել,
 - 6.8.2. Արժեթղթերի տեղաբաշխման գինը,
 - 6.8.3. Արժեթղթերի տեղաբաշխմանը մասնակցության համար սինդիկատի անդամներին տրվող վարձատրության չափը,
 - 6.8.4. Արժեթղթերի տեղաբաշխման կարգի ու պայմանների և սինդիկատի անդամների համագործակցության կազմակերպման վերաբերյալ այլ դրույթներ:
- 6.9. Բանկը կարող է քննարկել այլ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կազմակերպվող արժեթղթերի տեղաբաշխման ընթացքում տեղաբաշխողների սինդիկատին մասնակցելու առաջարկը: Նման առաջարկը ընդունվում է Բանկի ներդրումային կոմիտեում դրական որոշում ընդունվելու և Բանկի գործադիր տնօրենի կողմից արժեթղթերի տեղաբաշխման սինդիկատին մասնակցելու մասին պայմանագիր ստորագրելու միջոցով՝ հաշվի առնելով սույն ընթացակարգի 4.14 կետի դրույթները:
- 6.10. Տեղաբաշխման ընթացքում, կախված տեղաբաշխման եղանակից /բորսայական կամ ար-

	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ընթացակարգ		
	Տարբերակ՝ 3.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.04.2015թ.

տաբոբասայական/, Բանկը կազմակերպում է արժեթղթերի օտարման գործընթացը: Արժեթղթերի օտարումն իրենից ներկայացնում է արժեթղթերի վաճառքը առաջին ներդրողներին և արժեթղթերի դիմաց ստացվող գումարների մուտքագրումը թողարկողի բանկային հաշվին: Արժեթղթերի արտաբոբասայական օտարման գործընթացն ընդգրկում է հետևյալ փուլերը.

- 6.10.1. Հաճախորդի անունով Բանկում բացվում է դրամային հաշիվ, որի վրա պետք է կուտակվեն արժեթղթերի օտարումից հավաքագրված դրամական միջոցները,
 - 6.10.2. Հաճախորդի անունով ՀԿԴ-ում բացվում է թողարկման հաշիվ,
 - 6.10.3. Բանկը ներդրողներից համապատասխան հայտերի (հանձնարարականների) հիման վրա ընդունում է արժեթղթերի ձեռք բերման համար կատարված վճարումները, որոնք կուտակվում են Հաճախորդի համապատասխան հաշվում,
 - 6.10.4. Հաճախորդի թողարկման հաշվից համապատասխան ծրագրային համակարգի միջոցով ՀԿԴ-ին են փոխանցվում արժեթղթերի փոխանցման հանձնարարականները:
- 6.11. Արժեթղթերի բոբասայական տեղաբաշխման պարագայում բոլոր գործընթացներն իրականացվում են Նատաք ՕԷմէքս Արմենիա ԲԲԸ և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ համապատասխան կանոններով սահմանված կարգով:
- 6.12. Բանկի նախաձեռնությամբ արժեթղթերի տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով: Եթե տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց՝ տեղաբաշխման կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով: Տեղաբաշխման կասեցման մասին որոշումն ընդունվում է Բանկի Գործադիր տնօրենի որոշմամբ՝ Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի եզրակացության հիման վրա:
- 6.13. Տեղաբաշխումը կարող է կասեցվել հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝
- 6.13.1. եթե Բանկի կողմից տեղաբաշխման ընթացքում բացահայտվել է, որ ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակոմպորտիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված,
 - 6.13.2. Բանկի կողմից մշակվել և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում արժեթղթերի ազդագրի լրացում, որի պարագայում կառաջանա «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածով սահմանված հետգնման պարտավորություն,
 - 6.13.3. առկա է տեղաբաշխման կասեցման մասին ՀՀ կենտրոնական բանկի որոշումը,
 - 6.13.4. առկա են այնպիսի հիմքեր, որոնք ներդրողների շահերին կամ արժեթղթերի տեղաբաշխման գործընթացին վտանգ են սպառնում:
- 6.14. Տեղաբաշխման ավարտից հետո /արտաբոբասայական տեղաբաշխման պարագայում/ Պատասխանատու ստորաբաժանումը ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, մասնավորապես՝ կազմում է տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվությունը և այն տրամադրում Հաճախորդին՝ պետական լիազորված մարմին ներկայացնելու նպատակով:

7. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

- 7.1. Արժեթղթերը (մասնավորապես՝ պարտատոմսերը) կարող են ապահովված լինել գույքի գրավով կամ երրորդ անձանց կողմից տրված երաշխավորությամբ:
- 7.2. Բանկի կողմից որպես գրավ ընդունելի են ապահովման հետևյալ միջոցները.
 - 7.2.1. Հաճախորդի՝ Բանկում գտնվող ավանդային հաշվում առկա միջոցները: Արժեթղթերի ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել ավանդի գումարի 100%-ը:
 - 7.2.2. Անշարժ գույք, այս դեպքում արժեթղթերի ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել գրավի առարկայի շուկայական արժեքի 70%-ը:
 - 7.2.3. Շարժական գույք և/կամ դեբիտորական պարտք (այդ թվում՝ հիմնական միջոցներ, ապրանքանյութական պաշարներ, դեբիտորական պարտքեր)՝ պայմանով, որ Բանկն օժտված է դրանք վերահսկելու անհրաժեշտ հնարավորություններով: Այս դեպքում արժեթղթերի ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել գրավի առարկայի հաշվեկշռային կամ շուկայական արժեքի 60%-ը:
- 7.3. Եթե արժեթղթերից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Հաճախորդն առաջարկում է գրավադրել գույք, ապա Բանկի կողմից պահանջվում են գրավադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը:
- 7.4. Արժեթղթերը կարող են ապահովված լինել նաև պետության, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից տրված երաշխիքներով, Բանկի կողմից ընդունելի բանկերի և իրավաբանական անձանց երաշխավորություններով:
- 7.5. Բանկի գործադիր տնօրենի հրամանով կարող են սահմանվել չափանիշներ՝ Բանկի համար ընդունելի երաշխավորություններ ներկայացնող բանկերի և իրավաբանական անձանց համար:

8. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 8.1. Բանկն աշխատանքներ կարող է իրականացնել արժեթղթերը կարգավորող շուկայում առևտրին թույլատրվելու ուղղությամբ իսկ թույլտվություն ստանալուց հետո նաև դիմել Նասդաք Օեմեքս Արմենիա ԲԲԸ շուկա ստեղծողի կարգավիճակ ստանալու համար, եթե տվյալ արժեթղթեր թողարկողի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր:

9. ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 9.1. Բանկը Հաճախորդին կարող է մատուցել արժեթղթերի ռեեստրավարման, սպասարկման և մարման կապակցությամբ հաշվարկային ծառայություններ, Թողարկողի և Բանկի միջև ստորագրված համապատասխան պայմանագրի/երի համաձայն:

	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ընթացակարգ		
	Տարբերակ՝ 3.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.04.2015թ.

10. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

11.1. Բանկը Խորհրդին ներկայացնում է Հաճախորդների արժեթղթերի թողարկման կազմակերպման վերաբերյալ մատուցած ծառայությունների մասին հաշվետվություններ և տեղեկանքներ՝ վերջինիս կողմից սահմանված ձևով և պարբերականությամբ:

11. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12.1. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման վերաբերյալ Բանկի և Հաճախորդի միջև գործընկերության հաստատման, այդ թվում՝ արժեթղթերի թողարկման կազմակերպման նպատակով աշխատանքները կազմակերպում է Պատասխանատու ստորաբաժանումը: Գործընկերության հաստատման աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով Գործադիր տնօրենի հրամանով կարող է ձևավորվել աշխատանքային խումբ, որում Պատասխանատու ստորաբաժանումից (աշխատակիցներից) բացի կարող են ընդգրկվել նաև Օժանդակող ստորաբաժանումները (աշխատակիցները)՝ ըստ ծառայությունների մատուցման գործառույթների:

	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ընթացակարգ		
	Տարբերակ՝ 3.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.04.2015թ.

Հավելված 1

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ գործադիր տնօրեն
Պարոն՝ -----

Դ Ի Մ ՈՒ Մ

Հարգելի պարոն -----

Խնդրում ենք Ձեզ կազմակերպել ----- ընկերության արժեթղթերի թողարկում և տեղաբաշխում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերի ցանկը:

Հարգանքներով -----

	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ընթացակարգ		
	Տարբերակ՝ 3.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.04.2015թ.

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

- Հաճախորդի կանոնադրության և պետական գրանցման վկայականների պատճենները,
- Հաճախորդի հարկ վճարողի հաշվառման համարը,
- Հաճախորդի գործունեության համար անհրաժեշտ հատուկ թույլտվությունների (լիցենզիաների) պատճենները (առկայության դեպքում),
- Բանկի հետ վարվող բանակցություններում (աշխատանքային հանդիպումներում) հանդես գալու, համապատասխան պայմանագրեր և այլ փաստաթղթեր ստորագրելու իրավունք ունեցող անձի/անձանց լիազորությունները հաստատող փաստաթղթեր (նշանակման հրամանի կամ որոշման պատճենը),
- Ներդրումային ծրագրի նկարագիրը (բիզնես պլանը),
- Թողարկվող արժեթղթերի նախնական պայմանները (առկայության դեպքում),
- Նախկինում թողարկված արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման էական պայմանների վերաբերյալ տեղեկություններ:
- Հաճախորդի ընթացիկ և նախորդող երեք տարիների ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված անկախ աուդիտորի կողմից, ինչպես նաև՝
 - հաշվեկշռային հետևյալ հոդվածների մեկնաբանում՝ հիմնական միջոցներ, արտադրական պաշար, պատրաստի արտադրանք, ապրանքներ, հաշվարկներ դեբիտորների հետ, հաշվարկներ կրեդիտորների հետ,
 - հարկերից ազատվելու և արտոնությունների մասին տեղեկանք (առկայության դեպքում):
- Փաստաթղթեր, որոնք բնութագրում են Հաճախորդի նախկինում վարած գործունեությունը (գործունեության համառոտ բնութագիրը, հիմնական ուղղությունները, նրանց տեսակարար կշիռը, սեփական սպառման ցանցի և արտադրական բազայի առկայությունը, և Բանկի կողմից այլ պահանջվող փաստաթղթեր) և ապագա կանխատեսումները:
- Գույքի գրավով, երրորդ անձանց կողմից տրված երաշխիքներով կամ երաշխավորություններով ապահովված արժեթղթերի թողարկման դեպքում Հաճախորդը պետք է ներկայացնի գրավը նկարագրող կամ երաշխիքների կամ երաշխավորությունների ստացման վերաբերյալ պայմանավորվածություն վկայող փաստաթղթերը (առկայության դեպքում):
- Բանկի կողմից պահանջվող այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք բխում են արժեթղթերի թողարկման և/կամ տեղաբաշխման գործընթացն ավելի արժանահավատ գնահատելու համար: